ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ Ս. Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Լրացավ հանրապետության ճանաչված պատմաբաններից մեկի՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սիմոն Միսաքի Կրկյաշարյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական ու գրական-թարգմանչական արգասաբեր գործունեության 60-ամյակը:

Ս. Կրկյաշարյանը ծնվել է 1923 թ. դեկտեմբերի 7-ին, Աթենքի Կոկինիա արվարձանում՝ եղեռնից հրաշքով փրկված կաշեգործ հաճնցի Միսաք Կրկյաշարյանի և տնային տնտեսուհի, աղանացի Ազնիվ Իրատյան-Կրկյաշարյանի ընտանիքում:

Սկզբնական կրթությունը ստացել է տեղի յոթնամյա հայկական դպրոցում, որն ավարտել է 1936 թ. և հաջողությամբ հանձնելով ընդունելության քննությունները՝ ընդունվել է տեղի հունական դասական գիմնազիան, այն ավարտելով 1943 թ.: Դեռևս գիմնազիայում ուսանելիս Ս. Կրկյաշարյանն ակտիվ մասնակցում է իտալա-գերմանական զավթիչների դեմ Դիմադրական շարժմանը՝ գլխավորելով գիմնազիստների ընդհատակյա կազմակերպությունը: Շատ վաղ բացահայտվում են նրա գրական հակումները: Նա անդամակցում է տեղում կազմակերպված գրական խմբակին և հրատարակում իր «Ցայգալույս» խորագիրը կրող հունարեն գրված բանաստեղծությունների ժողովածուն:

1944 թ. Ս. Կրկյաշարյանն ընդունվում է Աթենքի Կապոդիստրիասի անվան ազգային համալսարան և սովորում մինչև 1947 թ.: Այս տարիներին նա հասարակական բուռն գործունեություն է ծավալում Աթենքի հայկական համայնքում, աշխատակցում է, իսկ այնուհետև խմբագրում □Նոր կյանք□ հայկական առաջադիմական թերթը և գործուն մասնակցում հունահայերի հայրենադարձությանը: Համալսարանական ուսումնառությանը զուգահեռ, նա ուսուցչություն է անում իր իսկ սովորած դպրոցում:

Սակայն երիտասարդ Ս. Կրկյաշարյանին ձգում էր մայր հայրենիքը, և նա 1947 թ. վերջին, կիսատ թողնելով ուսումնառությունը Աթենքի համալսարանում, որպես կարավանապետ գլխավորում է 2750 հունահայերի հայրենադարձությունը: Սկզբնական շրջանում նա ուսուցչություն է անում Երևանի միջնակարգ դպրոցներից մեկում՝ դասավանդելով պատմություն, սակայն, ուսման ծարավը նրան 1950 թ. տանում է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական

ինստիտուտի պատմության ֆակուլտետ, որը նա գերազանցությամբ ավարտում է 1954 թ.:

Ինստիտուտում ուսանելիս շատ արագ բացահայտվում են ուսումնատենչ երիտասարդի գիտահետազոտական ունակությունները: Ուսանողական գիտական ընկերությունում նա հանդես է գալիս Շահապիվանի կանոնների, Զեյթունի 1862 թ. ապստամբության, Սուրեն Սպանդարյանի մանկավարժական հայացքների և այլ խնդիրների մասին արժեքավոր զեկուցումներով՝ բազմիցս արժանանալով մրցանակների:

Պատմագիտության նկատմամբ սերը նրան բերում է գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտ: Նա 1959 թ. ընդունվում է ինստիտուտի ասպիրանտուրա և գործուղվում Լենինգրադի (Սանկտ-Պետերբուրգ) համալսարանի պատմության ֆակուլտետի Հունաստանի և Հռոմի պատմության ամբիոն, որտեղ աշակերտում է ճանաչված գիտնականներ Հ. Օրբելուն, Վ Ստրուվեին, Բ. Պիոտրովսկուն, Ի. Դյակոնովին և Ք. Կոլոբովային: Հունարենի ու հին հունարենի փայլուն իմացությունը և աղբյուրագիտական պատշաճ պատրաստությունը նրան հնարավորություն են տալիս արդեն ասպիրանտուրայում սովորելիս հրապարակելու «Возникновение городов в Армении во II в. до н. э. - III в. н. э» բարձրարժեք հոդվածը («Научные доклады высшей школы», Исторические науки, М., 1961, N 4), որով և նա գրավում է անտիկ շրջանի պատմությամբ զբաղվող ռուս պատմաբանների ուշադրությունը:

1962 թ. ավարտելով ասպիրանտուրան՝ Ս. Կրկյաշարյանը վերադառնում է Երևան և իբրև կրտսեր գիտաշխատող, աշխատանքի է անցնում պատմության ինստիտուտի հին և միջին դարերի պատմության բաժնում, որտեղ անվանի հայագետներ Ս. Երեմյանի, Հ. Անասյանի, Գ. Սարգսյանի, Վ. Հակոբյանի, Հ. Բարթիկյանի, Մ. Զուլալյանի ու Ա. Տեր-Ղևոնդյանի միջավայրում ձևավորվում է հայագետ-աղբյուրագետ և հելլենագետ Ս. Կրկյաշարյանը:

1963 թ. արդեն մեծ փորձառություն ունեցող Ս. Կրկյաշարյանը հաջողությամբ պաշտպանում է «Հելլենիստական թագավորների փոխհարաբերությունները Փոքր Ասիայի և Հայաստանի քաղաքների հետ» թեկնածուական ատենախոսությունը և արժանանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի: Ս. Կրկյաշարյանի երկար տարիների տքնաջան գիտահետազոտական աշխատանքների հիանալի մարմնավորումը եղավ նրա «Հին Հայաստանի պետական կառուցվածքը» դոկտորական ատենախոսության փայլուն պաշտպանությունը, որը նրան բերեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Ս. Կրկյաշարյանի գիտական ողջ գործունեությունն ընթացել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, որտեղ նա զբաղեցրել է գիտական բոլոր պաշտոնները՝ մինչև խմբի ղեկավարի և բաժնի վարիչի: Լայն է հոբելյարի գիտական հետաքրքրությունների շրջանակը, որը ներառում է հելլենիստական քաղաքների, հին Հայաստանի պետական կառուցվածքի, հասարակական-քաղաքական պատմության, հայ-հունական, հայ-հռոմեական, հայ-պարսկական

հարաբերությունների քննության ոլորտները՝ ժամանակագրորեն տարածվելով մ. թ. ա. VI դարից մինչև Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության անկումը V դարում, ընդգրկելով մի ամբողջ հազարամյակ:

Հունա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրների քաջիմացությունը Ս. Կրկյաշարյանին հնարավորություն է տվել քննելու և հավուր պատշաճի լուսաբանելու Հին Հայաստանի քաղաքների սոցիալական կազմը, թագավորի ու արքունիքի և բնակչության տարբեր շերտերի փոխհարաբերությունները, պետական ապարատի կազմավորման գործընթացներն ու զարգացումը, նախարարությունների հաստատությունը, գործակալությունների գործառնության ոլորտները, քաղաքների վերաբնակեցումը կամ սինոյկիսմոսը, ծիսական երևույթները, հայոց արքայատոհմերի հաջորդականությունն ու ժամանակագրությունը, արքայական տիտղոսագրերը, բանակի կազմակերպական խնդիրները և այլն և այլն: Թվարկենք հեղինակի բազմաթիվ աշխատություններից լոկ մի քանիսը. «Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում» (ՊԲՀ, 1964, թիվ 1), «Բդեշխությունների առաջացումը Հայաստանում» (ՊԲՀ, 1966, թիվ 4), «Տիգրան II-ին վերաբերող մի կարևոր ուղղում» (ՊԲՀ, 1967, թիվ 4), «Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ» (Երևան, 1970), «Թագավորական իշխանությունը Արշակունյաց Հայաստանում» (ՊԲՀ, 1971, թիվ 1), «Երվանդունի արքայատոհմը Հայաստանում» (ՊԲՀ, 1973, թիվ 4), «Հայկական զորքը Արտաշեսյանների օրոք» («Տեղեկագիր» հաս. գիտ., 1975, թիվ 6), «Նախարարներն ու նախարարություններն հին Հայաստանում» («Լրաբեր հաս. գիտ.», 1978, թիվ 11), «Պետական ապարատի կազմավորումը և նրա հետագա զարգացման փուլը հին Հայաստանում» (ՊԲՀ, 1994, թիվ 1-2), «Քրմական դասը Հայաստանում» («Էջմիածին», 1994, թիվ 7) և այլն: Հեղինակի գիտական հետաքրքրությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն Հայաստանում հայտնաբերված հունարեն արձանագրությունների, մասնավորապես Գառնիի և Արմավիրի արձանագրությունների աղբյուրագիտական հանգամանալից քննությունները՝ նրա կողմից տրված բացատրություններով և նոր ու թարմ մոտեցումներով: 1960-1980 թթ. նա մասնակցել է Պանտիկապեոնի (Կերչի), Գառնիի, Արմավիրի և Արտաշատի հնագիտական պեղումներին:

Չնայած հիշյալ ասպարեզներում Ս. Կրկյաշարյանի մեծ աշխատանքին, կա մի բնագավառ, որտեղ նրա ծառայություններն անհնար է գերագնահատել: Անվանի պատմաբանը իր տասնամյակների տքնաջան աշխատանքով հիմք է դրել «Հին հունական աղբյուրներ» շարքին՝ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարում, որը լույս է ընծայում ՀՀ ԳԱԱ հրատարակչությունը: Հեղինակի հմուտ թարգմանությունների շնորհիվ հույն հեղինակներ Հոմերոսի, Հերոդոտոսի, Քսենոփոնի, Դիոդորոս Սիկիլիացու, Դիոն Կասիոսի, Հովսեպոս Փլավիոսի և Պլուտարքոսի երկերը մատչելի դարձան ոչ միայն գիտական շրջաններին, այլև ընթերցող լայն հասարակայնությանը: Հույն հեղինակներն

սկսեցին «խոսել» հայերեն: Պատմաբան Ս. Կրկյաշարյանին բնությունը տվել է անուրանալի գրական շնորհք: Նրա հիշյալ թարգմանությունների և հին ու նոր հույն գրողներ Սոփոկլեսի, Եվրիպիդեսի, Արիստոփանեսի, Վառնալիսի և այլոց աշխատությունների թարգմանության համար 1977 թ. նա ընտրվեց Հայաստանի գրողների միության անդամ, 1986 թ. դարձավ Հռոմի գրականության և արվեստի «Տիբերինա» ակադեմիայի արտասահմանյան անդամ, իսկ 1987 և 2003 թթ. արժանացավ, համապատասխանաբար, գրողների միության Եղիշե Չարենցի անվան և թարգմանչաց «Կանթեղ» մրցանակներին:

Ս. Կրկյաշարյանը մշտապես ձգտել է իր հարուստ գիտելիքները՝ պատմագիտական և թե լեզվական, փոխանցել երիտասարդ սերնդին: 1968 թվից համատեղության կարգով հրավիրվել է Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոն՝ որպես հին հունարենի և աղբյուրագիտության դասախոս, Էջմիածնի հոգևոր ճեմարան՝ որպես պատմության, անտիկ գրականության ու հին հունարենի դասախոս, Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետ, ուր մինչև օրս դասավանդում է հին հունարեն: Նրա ղեկավարությամբ հաջողությամբ պաշտպանվել են մի շարք թեկնածուական ատենախոսություններ: Նա մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների՝ հանդես գալով արժեքավոր զեկուցումներով:

Հանրապետության գիտական հասարակայնությունը բարձր է գնահատել Ս. Կրկյաշարյանի ծառայությունները հայագիտությանը և անտիկ պատմությանը: 2000 թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ութսուն տարիների բարձունքից հետադարձ հայացք նետելով Ս. Կրկյաշարյանի անցած կյանքի ուղուն, կարող ենք միայն արձանագրել, որ այն հայրենասեր գիտնականի, հայագիտությանն անմնացորդ նվիրված երախտավորի կենսագրություն է: Այժմ էլ անվանի պատմաբան-աղբյուրագետը երիտասարդական ավյունով շարունակում է իր գիտական և մանկավարժական արգասաբեր գործունեությունը: Նրա ծրագրերը լեցուն են գիտական նոր մտահղացումներով, և, անտարակույս, առաջիկայում հայագիտությունը կհարստանա ճանաչված պատմաբանի նորանոր արժեքավոր ուսումնասիրություններով ու թարգմանություններով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ. Հ.
Պատմական գիտությունների դոկտոր